

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԲԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

•

Ինչպէս տաղերում, այնպէս էլ «Մատեան Ոգրերգութեան» պոէմում նարեկացիին բանաստեղծութեան ուրիշը և երաժշտականութիւնը ուժեղացնում է նաև բաղաձայնների և ձայնաւորների հանդիսութեամբ (այլոտերացիա և ասոնանս)։ Եթէ այդ տեսակէտից տաղերը մի քայլ առաջ էին ներքողներից, ապա նարեկն էլ շատ աւելի առաջ է տաղերից, որովհետև տաղերից մի մասում (խօսքը լուսագոյնների մասին չէ) նարեկացու համար յատկապէս բաղաձայնութիւնները ինքնանպատակ բնօրի ունեն և առանձնապէս կապուած չեն բովանդակութիւնից բխող յատուկ անհրաժեշտութեան հետ, այլ զործածուած են իբրև հոետորական-ոճական զարդարանքներ։ Իսկ նարեկում այդպիսի բան, կարելի է ասել, չի հանդիպում։

Յոյց տալու համար, թէ այս անգամ հանգիստութեան վերաբերմամբ նարեկացին որքան նրբանկատութիւն է հանդէս բերել, բաւական է նորից յիշատակել նրա բացատրութիւնները՝ ժողովրդական եղերերգութիւնների հետեւողութեամբ մի հատուած գրելու կապակցութեամբ։ Այդտեղ նարեկացին գրում է, որ կողկողազին եղանակներին բանաստեղծութիւններ յարմարեցնող բանահիւսնները իւրաքանչիւր տողն աւարտում են միևնոյն գրով, որպէսզի լսողների ուրախ աւելի ձմլեն ու մօրմօքեն։ Ինքն էլ մի տեղ նման բանի ձգտելով՝ հատուածի տողերը վերջացնում է ի ձայնաւորով։ Այս պարզ կերպով յոյց է տալիս, որ նարեկացին գիտակցաբար է գիմում հանգիստութիւններին այն սեւեռուն նպատակն ունենալով, թէ զրանցով էլ աւելի կ'ուժեղացնի բովանդակութեան ներգործութիւնը։ Հետաքրքրականն այն է, որ խորը թախիժով ընթերցողին համակելու համար ի ձայնաւորով է կազմում ուրիշական առձայնոյթը (ասոնանսը), ուրեմն այդ ձայնաւորի երանգի մէջ նա նման գերին համապատասխան ինչ որ բան է տեսել։

Բայց վերջ ի վերջոյ նարեկումն էլ աւելի նշանաւոր են բաղաձայնութիւնները (այլոտերացիաները), որոնք գերազանցապէս հետապնդում են բնաձայնութիւնն առաջ բերելով հարստացնել և ուժեղացնել բանաստեղծութեան ընդհանուր երաժշտական կողմը։ Նարեկացին երբեմն այնպիսի բարդ և հարուստ բնաձայնութիւններ է ստեղծում, որ դժուար թէ այդ գործում նա որևէ մրցակից ունենայ։ Այդպիսի բնաձայնութեան մի ամենակէտսիկ նմուշ կարող է համարուել ԾԴ գլխում նկարուած խեղդուող մարդու ամբողջ պատկեր-հատուածը.

Եւ Բանգի ի ծուփս Բազմալսանգս
Ալեհանջ հողմոյ սասկապէս զգուեալ
Ուժգին լլկանօք ի սպառ ճաղնապմաբ ի
ծովին,
Փոխեալ ընկեցեալ ի վտակն վայրենական
ողովիչ,
Առ որս զմասունս ձեռացս այր անդր ճա-
րաբերեալ,
Իբր ի հոսանաց բռնութեանց զարնանազայր
գետոց,
Արսնգեալ յակամայ ընթացս ոլորմագին
զլորման,
Ջրակուլ ողեսպառ պզտորաբուրեամբ,
Դաժանաճոս սկախառն մամաւումս խառ-
նախառն մանաբեր երկամբ վանեալ,
Ըստ սրոց յուլիսիցն հեղեղիցն հեղձուցեալ։
(Բան ԾԴ. — Դ.)

Այս հատուածը, որը նախ և առաջ մի սքանչելի բանաստեղծական համեմատութիւն է հոգեկան ներքին դրութեան պատկերման հետ, ընթերցողին ոչ միայն պատասխիկ տեսողական պատկեր է տալիս, այլև ձայնական-լսողական։ Առաջին տողերում, որտեղ խօսքը հողմակոծ ծովի բազմապատանգ ալիքների վրայ ընկածի կրած տազնապի ու սաստիկ չարչարանքների մասին է, պարզ լուռ է հողմերի ձայնը՝ ա, զ և ժ բաղաձայններ ունեցող բառերի յաջորդականութեամբ («Սաստկապէս զգուեալ ուժգին լլկանօք . . .»)։ Իսկ երբ նա վայրկենական յորձանքով բռնուած սկսում է խեղդուել՝ իբր զարնանազայր գետերի հոսանքով ակամայ տարուող մէկը, այն ժամանակ, վերջին տողերում պարզ լուռ է խեղդուելու ձայնը՝ ո, խ և դ բաղաձայն-

ներով հարուստ բառերի յաջորդականութեամբ («Ակախառն մամուլամատ խառնախօս... յուզխիցն հեղեղիցն հեղձուցեալ»)։

«Մատենան Ողբերգութեան» պոէմի գեղարուեստական հրաշակերտ ամբողջութեան մէջ խոշոր դեր է խաղացել նաև նարեկացու լեզուաշինական մեծ կարողութիւնը։ Այն ժամանակուայ գրական լեզուն՝ գրաբարը, այն հարստութեամբ՝ ինչ հարստութեան հասել էր զործածուելով պատմիչների, եկեղեցական գրողների և բանաստեղծների գործերում, չէր կարող նարեկացու ստեղծագործական երեւակայութեան անսահման թռիչքը, իրերամերժ խոհերի ու զգացմունքների բոլոր նրբերանգները մարմնաւորել։ Նարեկացուց առաջ բուն բանաստեղծութեան լեզուն շատ աւելի աղքատ ու ոչ-բանաստեղծական էր, քան մեր պատմիչների լեզուն։ Եկեղեցական զոգմաներին հետեւելը խանգարում էր հոգեւոր երգերի հեղինակներին լեզուական նորամուծութիւններ կատարել և այդ այն աստիճան, որ նրանց ստեղծագործութիւնների մէջ լեզուական անհատականութիւնը համարեա թէ կորչում էր։ Նարեկացին մեր բանաստեղծներից առաջինն էր, որ ճիշտ, փայլուն լեզուով գրելու գերազանցութիւնը նուաճեց պատմիչներից։

Այն բանասէրները, որոնք խօսել են «Ողբերգութեան Մատենան» լեզուի մասին, իրր թերութիւն մատնանշել են, որ այդ լեզուն շատ տեղ մուծ է ու խրթին։ Բայց այս կարծիքը այնքան էլ ճիշդ չէ։ Եթէ մի կողմ թողնենք այն հնարաւոր քերականական աղաւաղումները, որ կարող էին, թէկուզ պատահաբար, առաջանալ արտագրողների ձեռքով, ապա նկատուած մթութիւնից ու խրթնարանութիւնից քիչ բան կը մնայ, յամենայն դէպս՝ անհամեմատ քիչ, քան զբանք գոյութիւն ունեն նրա ներբողներում, մանաւանդ տաղերի մի մասում։

Մատենանի լեզուի մասին այդպիսի կարծիք է ստեղծուել, բոտ երևոյթին, հիմնականում հետեւել երկու պատճառներով։ Նախ՝ այն բանի հետեւանքով, որ թէ՛ հրատարակիչներից շատերը և թէ՛ բանասէրներից շատերը (մանաւանդ հնում) «Ողբերգութեան Մատենան»ը չեն ըմբռնել որպէս գեղարուեստական գործ, որպէս պո-

էզիայի արտադրանք, այլ սոսկ որպէս կրօնական մի աղօթագիրք, հետեւաբար նրանց պէտք է տարօրինակ թուար բանաստեղծի ողջ ներքինը արտայայտող պոէտիկական հնարանքներն ու միջոցները, կարճ ասած՝ նրա գործածած ողջ պատկերները։ Ուստի շատ բնական է, որ 1700 թուին առաջին անգամ լրիւ հրատարակուած Նարեկի և մի քանի այլ գործերի վերջում գրուած է «Լուծմունք և բացայայտութիւնք բառից և բանից խրթնածածուկ խորոց աղօթից», որտեղ մեծ մասամբ բունագրօսիկ կրօնա-դաւանաբանական մեկնութիւն է տրուած «խրթնածածուկ» համարուած աղօթքների» պատկերներին։

Երկրորդ՝ այն բանի հետեւանքով, որ նարեկացին իր այդ ստեղծագործութեան մէջ բազմաթիւ կարճ մէջերուցներ է կատարում կրօնական գրքերից՝ առանց տեղը յիշատակելու։ այս դեռ ոչինչ, միաժամանակ նա բազմաթիւ ակնարկներ է անում նոյն այդ գրքերում եղած վանագան անձնաւորութիւնների ու դէպքերի և պաշտօնապէս ընդունուած տեսակէտների մասին, որպէս թէ ընթերցողներին այդ բոլորը հրաշալի ծանօթ լինէին։ Այս դէպքում, իսկապէս, առանց յատուկ մասնագէտների կողմից տրուած «Լուծմունքի», շատ տեղ կարող էր անհասկանալի մնալ։ Նման գործերի շարքում չի կարելի չնչել Գալոր Նալեանի 1745 թուին Կ. Պոլսում լոյս տեսած «Մեկնութիւն աղօթից և ներբողաց սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի» աշխատութիւնը, որը խոշոր նշանակութիւն է ունեցել մանաւանդ Մատենան աշխարհաբար թարգմանողների համար։ Բայց խնդիրն այն է, որ «Մատենան Ողբերգութեան» պոէմում Նարեկացին որոշակի դիտաւորութիւն չի ունեցել գրուածքը մուծ ու խրթին դարձնել, ինչպէս նախորդ մի շարք ստեղծագործութիւններում։ Տեղատեղ այդպէս է ստացուել նրա համար աննկատելիորէն, մեծ մասամբ վերոյիշեալ պատճառներով։

Մատենանի լեզուն, ի հարկէ, պարզ և հասարակ լեզու էլ չէ և չէր էլ կարող այդպիսին լինել։ Պոէմի վիճ ու վերամբարձ բովանդակութեան համապատասխան՝ այն պէտք է լինէր ճիշտ և փոխ, ինչպէս այդ շատ ճիշդ նկատել է Միքայէլ Նալբանդեանը։

Մատենանի լեզուն, իբրև գեղարուեստական ստեղծագործութեան լեզու, բացի այն, որ, ինչպէս արդէն տեսանք, հարուստ է էպիտետներով, փոխաբերութիւններով և համեմատութիւններով, ունի ևս երեք կարևոր արժանիքներ: Իրանցից առաջինը բարդ բառերով վերին աստիճանի հարուստ լինելն է: Արիստոտելը հետաքրքիր արուեստի մասին խօսելիս՝ խորհուրդ էր տալիս հետադարձին մտքերն արտայայտելու համար յաճախակի բարդ բառերին դիմել, գտնելով, որ դրանով նրանք դուրս կուգան իրենց ժանրի սահմաններից և կը թեւակոխեն պոէզիայի սահմանները: Նա բարդ բառերով հարուստ լեզուն համարում է գեղարուեստական ստեղծագործութիւններին յատուկ լեզու: Սա մի նշանաւոր ճշմարտութիւն է, որը փայլուն կերպով ապացուցուած է նաև Նարեկացու ստեղծագործութեան փորձով:

Բարդ բառերի ընտրութեան կամ սեփական կազմութեան դէպքում Նարեկացին իր նախորդ գործերի հետ համեմատած՝ այստեղ դարձեալ դէպի աւելի դրական է գնացել: Նարեկում բարդ բառերը այնպիսի արտասովոր կազմութեամբ չունեն, ինչպէս շատ դէպքում տաղերում են հանդիպում («ցոլիմանահում», «օղինատիպ» և այլն), այլ սովորական՝ ինչպէս այդ յատուկ է հայոց լեզուի բառակազմութեան օրէնքներին: Այսպիսով, բանաստեղծի հակումը դէպի իրականութիւնը արտայայտուած է նաև բառաստեղծման բնագաւառում:

Նարեկից շատ հատուածներ կարելի է մէջբերել, որոնք հարուստ են բարդ բառերով, ինչպէս և ամանցներով (յատկապէս ժխտական ամանցներով) բարդուած բառերով:

Բարդ բառերը Նարեկացու լեզուին մի առանձին հմայք են տալիս, մանաւանդ երբ կուտակուած են հարկը պահանջած տեղերում և իբրև ամական մի գոյականի հետ գործածուելով՝ միասին կազմում են մի գեղեցիկ փոխաբերութիւն. օրինակ՝

Մոլորապատիւ վարժութիւնք,
Հանապազասխալ տեսութիւն,
Ակնայայտ աչքութիւն,
Պոռնկակեղք կերպարան,
Ախաբորբոք նիւր,

Դժնեատեսիլ գոյն,
Յոգնատեսիլ գեղ,
Յոլովամեղծ ծուխ ...

(Քան հմ. — Դ.)

Այս օրինակը միաժամանակ ցոյց է տալիս Նարեկի լեզուի երկրորդ կարևոր արժանիքը. դա նրա վառ երանդաւորութիւնն է: Նարեկացին լեզուի երանդաւորման, գունագեղման համար բոլորովին չի դիմում օտար կամ մոռացուած բառերի գործածութեան: Իբրև վերածնութեան ժամանակաշրջանի բանաստեղծ, նա ժամանակի ոգին հրաշալիօրէն արտացոլում է իր ստեղծագործութեան լեզուի մէջ՝ պատկերաւորման համար ուսել իրականութեան բազմազանութեանը դիմելով: Բոլոր դէպքերում իրականութիւնն է Նարեկացու պոէտիկական արուեստի հիմքերի հիմքը: Երբ բանաստեղծը պոէտուած որեւէ տեղ բովանդակութեան արտայայտման միջոցների կուտակումներ է ստեղծում, տպաւորութիւնը ուժեղացնելու նպատակով նա սովորաբար չի բաւականանում հէնց միայն կուտակմամբ, այլև նա այդ կուտակման բաղկացուցիչ մասերի առարկայական արտաքինը (ի՞նչպէս նոյնիմաստ նշանակութեամբ) վերցնում է կոնկրետ իրականութեան տարբեր կողմերից: Այսպէս՝ մի տեղ արտայայտելու համար այն միտքը, որ ինքը առանց «բարեգործի» գերագոյն կամքի չի կարող անել կամ լինել այն՝ ինչպէտք է, կատարում է հետեւեալ համեմատութիւնները.

Զի ոչ երբեք հարք ընթանայ երիվար առանց
սանձակալի,
Եւ ոչ նաւ համբառնայ հանդեպ առանց
ուղղչի,
Եւ ոչ արօր կեփռ ինչ գործէ առանց մանակալի,
Եւ ոչ երկուորեակի լծոցն ի նախ նեմեսցին
առանց եղողի,
Ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ,
Ոչ ասեղի ցնդին եւ կամ գումարին առանց
ժամանակի,
Ոչ արեգակն փոխաբերեալ շուրջանակի առանց
սարսական օդոյ ...

(Քան ԾԴ. — Բ.)

Ինչպէս տեսնում ենք, այստեղ ամէն մի տողը մի տարրեր գործողութիւն ու շարժման տեսարան է ներկայացնում. սկսած աշխատաւոր գիւղացու կեանքի հետ կապուած գործողութեան պատկերներէից (արօրը չի կարող հաւասար հերկել առանց մաճկալի, լծկան գոյգ եզները չեն կարող ճահ ճեմել առանց հօտաղի), մինչև տիեզերական մարմիններ շարժման վերաբերող պատկերները (աստղերը չեն ցնդում և կամ գումարում առանց ժամանակի): Երկվար և սանձակալ, նաւ և ղեկակալ, արօր և մաճկալ, եզներ և հօտաղ, ամպ և հողմ, աստղեր և ժամանակ, արեգակ և տարրական (իմա՝ տարրերից բաղկացած), օդ, այս բոլորը առանձին-առանձին վերցրած տարրեր աշխարհներ ներկայացնող բառերը բանաստեղծի ստեղծագործական կամքով ի մի խմբուելով միեւնոյն առիթով, լեզուն դարձնում են ծիածանափայլ:

Բերուած օրինակը միաժամանակ ցոյց է տալիս Նարեկի լեզուի երրորդ կարեւոր արժանիքը: Դա նրա՝ ասացուածքներով (աֆորիզմներով) հարուստ լինելն է: Նարեկացին գրում է միշտ ոճաւորուած. նրա խոհերի և զգացմունքների լեզուական արտայայտութեան ոճաւորման հիմնական տարրը հանդիսանում են ասացուածքները, թեաւոր խօսքերը: Վերևում բերուած հատուածի ամէն մի տողը միաժամանակ մի գեղեցիկ ամբողջական իմաստ արտայայտող ասացուածք է, նոյնիսկ ժողովրդական ոգով յորինուած: Արդեօք (թէկուզ և տարերայնօրէն) պատճառի և հետեանքի փլիսոփայական ըմբռնում չկա՞յ այդ տողերի մէջ. մի ըմբռնում, որ ծնուել է կենսափորձից և ժողովրդին էլ է յատուկ:

Ասացուածքի արժէք ունեցող արտայայտութիւններով լեցուն են Նարեկի էջերը. կարելի է բազմաթիւ նմուշներ բերել. ահա մի քանիսը. «կարիք անթուելիք և պատահարք ամենագրաւք», «Բնակութիւն կաւեղէն և անձրեք ուժգնակիք» (Բան Ծն. — Գ.), «Մտնեմ ի բոյնն աղաւնի և անդուստ ագռաւ ելանեմ», «հիմն արկանեմ և ոչ գլխաւորեմ», «Զայլս խրատեմ և ես ինքն անփորձ եմ» (Բան ՀԱ. — Բ.), «Ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ճենճերիմ» (Բան ԺԲ. —

Ա.): Սովորաբար ասացուածքները Նարեկում նոյնպէս խմբուած են և առանձին ամբողջական հատուածներ կազմում՝ բանաստեղծի տուեալ խոհը կամ զգացմունքը բազմակողմանիօրէն բացայայտելու համար:

Նարեկի լեզուի գեղեցկութիւնները, ի հարկէ, չեն սպառուում նշուած այս երեք կողմերով. իրել գեղարուեստական ստեղծագործութեան լեզու՝ այն ունի բազմաթիւ այլ արժանիքներ, որոնց թիւում անպայման պէտք է յիշատակել բառերի շարադասութեան շտեմնուած ճկունութիւնը:

Այս կապակցութեամբ պէտք է նշել մի այլ հանգամանք ևս, որի պատճառով նոյնպէս Նարեկի լեզուն համարուել է մութ ու խրթին: Այդ այն է, որ շարադասութեան հարցում Նարեկացին շատ դէպքում առաջնորդուած է ժողովրդական լեզուամտածողութեամբ, իսկ բանասէրները ոչ-պատմական մօտեցում հանդէս բերելով՝ Ժ. դարի գրաբարի մասին խօսելիս լուի Ե. դարի գրաբարի քերականական կանոններով առաջնորդուելով, Նարեկացու լեզուում եղած նորը որակել են որպէս մթութիւն առաջացնող խոտորում:

Նարեկացին զարմանալի նրբամտութեամբ և վարպետութեամբ օգտագործում է շարադասութեան ընձեռած բոլոր հնարաւորութիւնները իր պոէմի բովանդակութեան հոգեզմայլ մանրամասնութիւնները հարկը պահանջած ստեղծութեւն ընդգծելու և լեզուն աւելի ուրիշութիւն ու երաժշտական դարձնելու համար:

Նարեկի գեղարուեստական արժանիքները այնքան մեծ ու շատ են, որ եթէ օրինակ՝ թովմա կեմպիացու այնքան զովաբանուած և հոչակ վայելող «Համահետեուեմ Բրիստոսի» գիրքը դուրս նրա կողքին, իր մտայղացմամբ ու արուեստով պիտի թուայ մի շատ գորշ ու թոյլ լիրիկական ստեղծագործութիւն:

Մեր գրականութեան վերածնութեան շրջանը սկզբնաւորող մեծ բանաստեղծի «Մատեան Ողբերգութեան» պոէմը, անշուշտ, մարդկային ստեղծագործական մեծագործութեան գանձերից մէկն է:

Մ. ՄԿՐԵԱՆ

(Շարունակելի՝ 14)